

Զբոսաշրջային ծառայությունների մատուցման

Պայմանագիր N

ք.Երևան

« »

2015 թ.

«Էյր Կովկաս» ՍՊԸ-ն (հետագայում Կատարող), ի դեմս տնօրեն՝ Անի Եղիազարյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և

(կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի անուն, ազգանունը)

(Պատվիրատու), մյուս կողմից, որոնք հետագայում կկոչվեն՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով՝ «Կատարող»-ը պարտավորվում է «Պատվիրատու»-ի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները, իսկ «Պատվիրատու»-ն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների դիմաց:

2.1. «Կատարող»-ը պարտավորվում է մատուցել հետևյալ ծառայությունները՝ Տեղաբաշխել (տեղավորել) զբոսաշրջիկ/ներ/ին հետևյալ վայրում

նշել հյուրանոցային տնտեսության օբյեկտի լրիվ անվանումը, ամբողջական հասցեն

Հյուրերի քանակը՝		Այդ թվում երեխաներ՝	-
------------------	--	---------------------	---

Ժամանման օրը՝	Մեկնման օրը՝	Գիշերակացի քանակը՝				
Հյուրանոցային համարի տեսակը՝						
Ծառայության տեսակը՝	Տրանսպորտային ծառայություն	Էքսկուրսավարի (ուղեկցողի) ծառայություն	Գիշերակաց	Մումուդ	Բուժում	
	-	-	V	V		
Լրացուցիչ ծառայություններ						

Մանրի կազմակերպման, մատուցման ծառայությունները և հաճախականությունը՝

1.2.2 Ապահովել Պատվիրատու-ի շրջագայությունը հետևյալ երթուղով՝

նշել զբոսաշրջիկի շրջագայության երթուղին, նրա գտնվելու վայրը, ամբողջական հասցեն և տրանսպորտային միջոցի տեսակը

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 “Կատարող”-ը պարտավոր է՝

- ա) ծառայությունները մատուցել պատշաճ կարգով
- բ) ծառայությունները մատուցել համաձայն պատվերի
- գ) “Պատվիրատու”-ի պատվերը (ամրագրումը) “կատարող”-ը ընդունում և հաստատում է տվյալ ժամանակահատվածում հանգստյան տանը, առողջարանում, հյուրանոցում առկա հնարավորությունների սահմաններում :
- դ) “Կատարող”-ը իրավունք է վերապահում փոփոխելու ծառայությունների արժեքը կախված կացության վայրերի կողմից ներկայացված սակագների փոփոխություններից, այդ մասին տեղյակ պահելով “Պատվիրատու”-ին: Սակագներում ներառված չեն լրացուցիչ ոչ հիմնական ծառայությունների արժեքները (լողավազան, սաունա, բար, ռեստորան , բիլիարդ և այլն) և վերոհիշյալ ծառայություններից օգտվելու դեպքում վճարումները կկատարվեն գործող սահմանված սակագներով՝ կեցության վայրերում:
- ե) “Կատարող”-ը պատասխանատվություն է կրում իր մատուցած ծառայությունների ժամանակ “Պատվիրատու”-ին ոչ պատշաճ սպասարկման համար:

2.2 “Պատվիրատու”-ն պարտավոր է՝

- ա) վճարել մատուցված ծառայությունների համար՝ զբոսաշրջային փաթեթների կամ առանձին ծառայությունների հաշվարկված արժեքը ամբողջությամբ փոխանցելով “Կատարող”-ի հաշվարկային հաշվին ծառայության պայմանագրի ստորագրման պահից՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում :
- բ) Սույն պայմանագրով մատուցվող ծառայությունների պայմանագրային արժեքը կազմում է () **ՀՀ դրամ** , ներառյալ բոլոր տեսակի հարկերը :
- գ) Այլ լրացուցիչ ոչ հիմնական ծառայությունների արժեքը (լողավազան, սաունա, բար, ռեստորան, բիլիարդ և այլն) սակագներում ներառված չեն և վերոհիշյալ ծառայություններից օգտվելու դեպքում վճարումները կկատարվեն գործող սահմանված սակագներով՝ կեցության վայրերում:
- դ) չխախտել հասարակական կարգը, պահպանել հակահրդեհային անվտանգության կանոնները հակառակ դեպքում պատասխանատվություն է կրում իր գործողությունների հետևանքով առաջացած նյութական վնասի փոփոխությամբ :
- ե) **պայմանագիրը վաղաժամկետ դադարելու կամ պատվիրատուի կողմից պայմանագրով նախատեսված ծառայություններից չօգտվելու դեպքում՝ պատվիրատուի նկատմամբ կիրառվում է տուգանք պայմանագրի գնի մինչև քսանհինգ տոկոսի չափով, եթե սպառողը պայմանագրից հրաժարվել է ոչ ուշ, քան պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման սկզբի ժամկետից երկու աշխատանքային օր առաջ:**
- զ) Սույն պայմանագրի 2.2 (ա) կետում նշված գումարի չօգտագործված մասը մնում է կատարողի հաշվարկային հաշվին որպես կանխավճար կամ հետ է փոխանցվում Պատվիրատուի հաշվարկային հաշվին (սոցիալական փաթեթի համար բացված հաշվեհամարին)՝ նշված գումարի 20 (քսան)տոկոս պահումով, եթե ՀՀ օրենքով այլ կարգ սահմանված չէ

4. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՖՈՐՍՄԱԺՈՐ

4.1 “Կատարող”-ը իր պարտականությունների չկատարման համար պարտավորություն չի կրում, եթե դա տեղի է ունեցել անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը և այլն:

5. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 Սույն պայմանագրի դրույթների կատարման հետ կապված վեճերը փոխադարձ բանակցությունների միջոցով լուծելու անհնարինության դեպքում, դրանք ենթակա են լուծման ՀՀ գործող օրենսդրությամբ:

6. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՑԹՆԵՐ

6.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պարտավորությունների լրիվ կատարումը:

6.2 Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմի մոտ գտնվում է մեկ օրինակ:

Որպես համաձայնության ապացույց՝ յուրաքանչյուր կողմը, ի դեմս իր լիազոր ներկայացուցիչների պետք է ստորագրի սույն փաստաթուղթը՝ վերը նշված ամսաթվով:

7. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հաճախորդ՝	«Էյր Կովկաս» ՍՊԸ
Անձնագրային տվյալներ՝	Իրավաբանական հասցե՝ ՀՀ. Ք. Եղեգնաձոր, Մոմիկի 2/45
Հաշվառման հասցե՝	Գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն համայնք, Դավիթ Անհաղթ 23շենք, 17 շինություն
Բանկ՝	«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ, «Եղեգնաձոր» մասնաճյուղ
Հաշվեհամար՝	Հ/հ 2475801345490010
Հեռ.՝	<p>Հեռ. Երևան. 20 96 00, /096/ 20 96 00</p> <p>www.aircaucasus.am</p> <p>e-mail: info@aircaucasus.am</p>
	Տնօրեն՝ Անի Եղիազարյան